09-05.02-04
9000111 94 272

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ - 22 ԱՆԳՖԾ - 1

2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «22»«հունվար»2016թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Աշոտ Հայրապետյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 23-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 345.166.200 (երեք հարյուր քառասունհինգ միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում) և այդ ժամկետների խախտումները կազմակերպության մեղավորության արդյունքում են եղել,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է

անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1-րդ կետում նշված գումարը փոխանցում է կազմակերպությանը սույն պայամանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն սույն պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի (հավելված 2):

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե

դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին՝	**Կազմակերպություն՝**
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք.Երևան, Հալաբյան 41ա,	ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011194272	Հ/Հ1930009611880100
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ա. Գևորգյան	Ա. Հայրապետյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2016 թվականի հունվարի 22 -ին կնքված պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման					
անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը(դրամ)
2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացում	1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների վերապատրաստում: 2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր և առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնող հարկադիր կատարողների վերապատրաստում: 3. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության բոլոր խմբերի պաշտոններ զբաղեցնող հարկադիր կատարողների հատուկ ուսուցում: 4. Դասընթացներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 154-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 23-Ն որոշումներով և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-67-Ն և 2010 թվականի սեպտեմբերի 9-	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացում	Արդյունք՝ Մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացում Գնահատման չափանիշներ՝ 1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցած ունկնդիրների թիվը, 2. Վերապատրաստում և հատուկ ուսուցման դասընթացների համապատասխանությունը ծրագրով նախատեսված թեմաներին	2016 թվականի դեկտեմբերի 30-ը	345.166.200

	ի N 186-Ն հրամաններով հաստատած կարգերով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատած ուսուցման խմբերի կազմերով և ծրագրերով: 5. Հատուկ ուսուցման ծրագրով նախատեսված կրակային դասընթացը ներառում է 9x18 մմ տրամաչափի «Բայկալ 442» կարճ ակոսափող հրազենով 12 և «Նշանակետ» էլեկտրոնային հրաձգային վարժասարքի «AK 47» ինքնաձիգով 30 կրակ արձակելու գործնական դասընթաց, իսկ ՀՀ արդարադատության նախարարության քրակատարողական վարչության պահպանության բաժնի քրեակատարողական ծառայողները ինքնաձիգով 12 կրակ արձակելու գործնական դասընթաց (յուրաքանչյուր ծառայողի համար): 6. Դասընթացներն իրականացվում են, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա և ք.Երևան, Հալաբյան 41ա , Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք N 56 շենք, հասցեներում: 7. «Գորիս», «Արթիկ», «Սևան», «Վանաձոր» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների ծառայողների, ինչպես նաև Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզային բաժինների հարկադիր կատարման ծառայողների դասընթացների իրականացման ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 շենքի կացարաններում իրենց ցանկության դեպքում, ընձեռնվում է անվճար գիշերելու հնարավորություն: 8. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների հատուկ ուսուցման և վերապատրաստման դասընթացների իրականացման ժամանակահատվածում Կատարողը ապահովում է Երևան քաղաքից				

	դեպի Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 1-ին փողոց 4-րդ նրբանցք, N 56 հասցե (և հակառակը՝ դեպի Երևան) ուղևորափոխադրումը՝ իրենց ցանկության դեպքում: 9. ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողներին՝ միայն վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացման օրերին, Կատարողը ապահովում է մասնակի սննունդով (առնվազն երկու անգամ թեյի և (կամ) սուրճի տրամադրում՝ մեկ հատ թխվածքաբլիթով, մեկ անգամ ճաշի տրամադրում /գազավորված ըմպելիք, տաք ուտեստ, աղցան/):				

Պետական մարմին՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Հալաբյան 41ա,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Կազմակերպություն՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
ՀՎՀՀ 02509478
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ1930009611880100

Աշխատակազմի ղեկավար՝

Գևորգյան

Ա.

Կ.Տ.

Տնօրեն՝

Ա. Հայրապետյան

Կ.Տ.

Հավելված N 2

2016 թվականի հունվարի 22-ին կնքված պայմանագրի

«2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացում» ծրագրի գծով 2016 թվականի բյուջետային հատկացումների սահմանաքանակների վերաբերյալ ժամանակացույց*

Հազար դրամ

գրի անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2016թ. պետական բյուջեից, ընդ որում (*թվերը ներկայացված են աճողական կարգով)												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմ.	դեկտեմ.
Հ ԱՆ հատուկ ծառայողների ապատրաստում ատուկ ուսուցում	345166.2	-----	65927,4	65927,4	93771,1	121614,8	149458,5	177302,2	205145,9	232989,6	270381,8	307774,0	345166,2

Պետական մարմին՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Հալաբյան 41ա,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Կազմակերպություն՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
ՀՎՀՀ 02509478
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ1930009611880100

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Գևորգյան

Կ.Տ.

Տնօրեն՝

Ա. Հայրապետյան

Կ.Տ.